



Մխիթար Գոշ

Գիրք Դատաստանի

7

**ԳԼՈՒԽ Զ ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԱՆԿԱՐՈՂԱՅ: ԱՅՐԻԿՆ ԵԹԷ
ԶԿԻՆՆ ԻՒՐ ՉԿԱՐԷ ՅԱՆՁՆԷ ՀԱՆԵԼ, ԱՅՍ Է ԴԱՏԱՍՏԱՆ**

Յարմարումն առն եւ կնոջ ըստ պատշաճի ցուցեալ է՝ ժամանակաւ երեց լինել առն, եւ կրսեր՝ կնոջն, որպէս ի ստեղծմանն ցուցաւ նախաստեղծիցն, զի ամենայնիւ իշխան լիցի այրն ի վերայ կնոջն, որպէս յայլսն, նմանապէս եւ յամուսնանալն: Եւ թէ պատահի, որ այրն չկարէ զկինն ի կուսութենէ հանել, թէ կամ լիցի կնոջն, որ ի միասին կենան՝ կացցեն առ իրարս, ապա թէ ոչ կամ՝ բաժանեցին, եւ առնու կինն զիւր պողոյզն գամենայն եւ ելանէ եւ առնու իւր այլ այր, զոր եւ կամեցի: Բայց մի՛ լիցի յաղագս այսոցիկ տուգանք առն, զի յոչ կամաց է ախտն. եւ ամենայն ինչ տացի ի կինն, բայց ի հանդերձիցն, զոր արարաւն երկոցունցն ի հարսանիսն: Եւ թէ անասուն բերեալ իցէ կինն, զգլուխքն առցէ եւ զկէսն աճոյն, եւ կէսն այրկանն տացի վասն աշխատութեան եւ ծախիցն: Եւ օժիտք եւ ծախք, զոր արարեալ են միմեանց ազգն եւ ազգայինքն յերկուց կողմանցն, մի՛ յիշեցին, եւ ոչ ծախք հարսանեացն: Սակայն հաւանութեամբ առն լիցի առն այլում. եւ այրն առցէ կին, որ այլ այր լինի առեալ, եւ մեռեալ իցէ այր կնոջն, զայն առցէ:

ԳԼՈՒԽ Է ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԶԱՆԱԶԱՆ ՊԱՏԱՀԱՐԱՅ

Եթե պատահի առն եւ կնոջ դիւահարութիւն, քննել արժան է. թէ յառաջ քան զպսակն էր եւ ծածկեցաւ խաբէությամբ ծնողաց կնոջն, ի տունս իւրեանց առցեն, մինչեւ բժշկեսցի, եւ զամենայն ծախք ինքեանք վճարեսցեն, մինչեւ բժշկեսցի եւ ապա դարձցի յայրն իւր, եթէ կամեսցի այրն, ապա թէ ոչ՝ իշխան լիցի արձակել զկինն: Ապա թէ ի տան առն պատահի դիւահարիլ, այրն հոգասցէ, մինչեւ բժշկեսցի կինն, եւ զամենայն ծախսն: Ապա թէ յետ եւթն ամի ոչ բժշկեսցի, իշխան լիցի այրն արձակել զնա եւ առցէ այլ կին: Եւ եթէ մանկունք իցեն, առ իւր հայրն թողցի, եւ կինն ընչիւք իւրովք ելցէ, եւ այրն, հրամանաւ կնոջն, այլ կին արասցէ, բայց ըստ կարողութեան հոգասցէ զկեանս: Իսկ եթէ ի տան ծնողացն է դիւահարել, առանց հրամանի կնոջն արասցէ կին, առանց լնուլ եւթն ամացն կանոնացն. բայց կինն ընչիւք իւրովք ելցէ, եւ ծախքն եւ հանդերձն, որ ի պսակին, մի՛ յիշեսցին: Նոյն դասաստան այսպէս լիցի, թէ առն պատահի ախտն գողի կամ պիսակութիւն. եթէ յառաջ քան զպսակն էր, եւ ծածկեցին ծնողքն, իշխան է այրն թողուլ զկինն, նոյնպէս եւ այրն թէ իցէ այսպիսի ախտի, իշխան է կինն թողուլ զայրն եւ լինիցի այլում: Իսկ եթէ յետ պսակին հանդիպի ախտքս այսոքիկ, ոչ է պարտ ննջել առ իրարս, այրն եւ կինն հայեսցին ի կեանս իւրեանց եւ ցուցցեն բժշկաց հոգեւորաց եւ մարմնաւորաց. եթէ գոյ հնար բժշկութեան՝ համբերեսցեն, ապա թէ ոչ՝ հրամանաւ առն եւ կնոջն արձակեսցին ի միմեանց: Եւ որ առողջն իցէ, ամուսնասցի այլում, եւ մինչեւ ի մահ հոգասցեն զկեանս իւրեանց, եւ զպողոյզն անդրէն դարձուցեն: Եւ եթէ պատահի յերկար եւ անբժշկելի հիւանդութիւն առն կամ կնոջն, ոչ ունին իշխանութիւն արձակիլ ի միմեանց, միայն թէ խղճասցեն միմեանց՝ արձակեսցին. եւ որ առողջն իցէ, ամուսնասցի, եւ զինչսն հիւանդին անդրէն դարձուցէն, եւ մինչեւ ի մահ զիրարս հոգասցեն, բայց ի տունս ծնողացն եւ ոչ երկոքինն ի մի տուն:

ԳԼՈՒԽ Ը ՎԱՍՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ ԳԵՐԵԼՈ

Եթէ ի տանէ առն գերի վարեսցի կինն, այր իւր գնեսցէ զնա: Եւ եթէ խռովեալ էր կինն եւ ի տունս ծնողացն գնացեալ էր եւ գերի վարեսցի, այրն եւ ծնողքն գնեսցեն: Նոյն լիցի եւ այրն, եթէ գերի վարեսցի: Եւ երբ գերեսցին, շրջելով խնդրեսցեն եւթն ամ, եւ թէ ոչ գտցեն, որ ազատն մնաց՝ ամուսնասցի հրամանաւ ծնողաց գերելոյն: Եթէ իրք մնացեալ կայ ի գերելոյն բաժնէ, անդրէն դարձուցեն ի ծնողսն գերելոյն:

ԳԼՈՒԽ Թ ՎԱՍՆ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Կան ոմանք, որ ախտի ատելութեանն զմիմեանս ատիցեն այր եւ կին, առանց բանի պոռնկութեան: Եթէ յառաջ քան զպսակն էր ատելութիւնն, եւ այրն ատիցէ զկինն եւ կանենայ զբաժնիլն ի կնոջէն, բաժանեացէ եպիսկոպոսն յետ բազում խրատու, եւ այսոց բաժինքն որպէս դիւահարացն լիցի: Եւ ըստ կանոնաց դատաստանի այրն ոչ իշխէ առնուլ կին, եւ կինն աոցէ իւր այր, աոցէ եւ զպոռնգն եւ յերից զմինն յայրկան իրացն՝ տուգանք, վասն զի անարգեաց զպսակն օրհնութեան: Նոյն դատաստան եւ կնոջն լիցի, եւ ոչ աոցէ այր, բայց եթէ զղջացեալ միմեանց տացեն թողութիւն իրերաց՝ ամուսնասցին: Բայց հրամանաւ եպիսկոպոսին լինիցի ամենայն ինչ: Իսկ այսոցիկ տուգանք եւ ապաշխարութիւն գրեալ է ի կանոնս սուրբ: Իսկ եթէ յետ պսակին ատիցեն զիրար այր եւ կին եւ որդիս ծնեալ իցեն, խրատիւ եւ տանջանօք եւ շատ ժամանակաւ՝ մեկնեցին: Եթէ ի կնոջէն է պատճառն, զկէս ընչից կնոջն տուգանք տացեն յայրն, վասն զի միացեալք են, եւ եթէ յառնէն՝ նոյնպէս, եւ ոչ իշխեն ամուսնանալ, բայց հրամանաւ միմեանց:

ԳԼՈՒԽ Ժ ՎԱՍՆ ՇՆԱՅՈՂԱՅ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Եթէ կին ումեք շնասցի, արձակեացէ զնա այր իւր եւ ինքն այլ կին արասցէ: Եւ եթէ հաճոյ է առն, զի բնակեցեն ի միասին, բարիոք է, զի պարտ է ի վերայ կնոջ իւրոյ: Եւ ընչիցն դարձն՝ որպէս յինն կանոնին գրեցաք՝ վասն ատելութեանն:

ԳԼՈՒԽ ԺԱ ՎԱՍՆ ԱՄԼՈՅ ԱՌՆ ԵՒ ԿՆՈՋ

Անուլ կին մի՛ արձակեացէ զնա այր իւր, զի Աստուծոյ է տալ զորդիս: Փորձել պարտ է, զի թէ ի ցաւոց իցէ՝ բժշկօք առողջացին: Ապա թէ վասն ժառանգութեան տեսանիցէ կինն զայր իւր տրտմեալ, ըստ օրինակին Աբրահամու եւ Սառայի, տացէ կինն հրաման արձակման. բայց մի՛ լիցի զամուլն եւ զծննդականն ի միասին պահել: Նոյնպէս, եւ թէ այրն իցէ անծնունդ, արասցէ, ըստ գրելոյդ: Իսկ սահման ժամանակին եւթն ամ իցէ, եթէ ի պսակն աղջիկն հնգետասան տարոյ էր, եւ կտրիճն՝ ութուտասան. իսկ եթէ այլ պակաս էին՝ զնոյն, եւ համբերութեան ժամանակն առաւել լիցի: Իսկ եթէ կինն այլ այր չկամենայ

առնուլ, դնել գնա այրն իւր յայլ տուն եւ անդ հոգասցէ զկեանս նորա մինչ ի մահ,
եւ զինչս կնոջն տացէ եւ կինն լիով, եւ ինքն առցէ այլ կին ծննդական, հրամանաւ
կնոջ իւրոյ: Բայց եթէ յառաջ գիտէր զամլութիւնն, եւ տրփանօք զիրար առին, մի՛
լիցի մեկնիլ մինչ ի մահ:

ԳԼՈՒԽ ԺԲ ՎԱՍՆ ՈՐՈՅ ՊԱՏՃԱՌԻ ԵԼԱՆԷ ԿԻՆՆ ՅԱՌՆԷՆ

Յորժամ կինն տեսանէ զայր իւր յարուագիտութեան, կամ յանասնապղծութեան,
կամ թէ ընդ անօրինի պղծի կամ պղծեսցէ, կամ ի մարդասպանութեան, յայս
պատճառանացս ի վերայ իշխան է կինն թողուլ զայր իւր եւ լիցի առն այլում: Եւ
զկէս ընչից առն առցէ կինն, ապա եթէ կամեսցի կինն թողուլ եւ ոչ:

ԳԼՈՒԽ ԺԳ ՎԱՍՆ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌԱԻ ԶՄԻՄԵԱՆՍ ԹՈՂՈՒԼ ԱՅՐ ԵՒ ԿԻՆ

Այր եւ կինն, եթէ ատելութեամբ զիրար թողցն, եւ պատահի մեռանել զոր էառն,
եւ այն, զոր թողեալն էր, անայր կայր, պարտ է առնուլ զայն, քանզի այլ պսակ ոչ
հասանի նոցա. այլ ոչ բռնութեամբ, այլ կամօք վասն Աստուծոյ:

ԳԼՈՒԽ ԺԴ ՎԱՍՆ ԵԹԷ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԿԱՄ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԻ ԻՅԷ ԱՅՐՆ ԵՒ ՅԱՄԵՆԱՅ, ԵՒ ԿԻՆՆ ԱՅԼ ԱՅՐ ԱՌՆՈՒ

Յորժամ այր ոք գնայ ի ճանապարհ եւ յամիցէ, պարտ է կնոջ նորա համբերել:
Ապա եթէ լսէ վասն մահու ստուգիւ, մի՛ առցէ այր մինչեւ յեթն ամն, ըստ
սահմանի գերելոցն: Իսկ եթէ յառաջ քան զսահմանն առն լիցի եւ կամ քան
զստուգելն մահու, եւ գայցէ այրն, իշխան է առնուլ զկին իւր, թէ եւ այնմ առն
պսակ ոչ հասանի, թէ եւ որդիս ծնեալ իցեն: Ապա թէ այլ պսակ հասանի այս
ճանապարհորդ այրկանս, իւր հրամանաւ լինի թողուլն եւ ոչ թողուլն: Ապա թէ
յետ եթն տարոյն եւ սուտ մահուանն գայցէ յետոյ, մի՛ առցէ զկինն իւր, թէ այլ
պսակ հասանի իւր, եւ այրկանն, որ զկինն առեալ էր, ոչ հասանի պսակ. թողցի
կինն այնմ, որ ոչ հասանի պսակ: Ապա թէ այնմ առն իցէ պսակ եւ իւր չիցէ, առցէ
զկինն իւր, թէ եւ որդիս ծնեալ իցեն: Իսկ եթէ այնմ ոչ իցէ պսակ եւ ոչ իւր, մի՛

առցէ, զի զկնի սահմանին դարձաւ: Ապա թէ այսմ ոչ անսայցէ, հարցանեն ընդ կինն, եւ կինն ում կամիցի՝ լինի: Իսկ եթէ գնայ մարդ յաշխարհ հեռի եւ կին արտասցէ, կին նորա մի՛ լինիցի այլում մինչեւ յեթն ամ, եթէ զղջացեալ դարձցի: Ապա թէ յետ այնորիկ ոչ գայ, եւ կինն ստուգեսցէ զչգալն, օրինօք առցէ իւր այր: Իսկ եթէ զկնի եւթն ամին գայցէ, ոչ կարէ առնուլ զկինն, քանզի անարգեաց զպսակն օրհնութեան: